Հանրապետական
մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>>

ՊՈԱԿ

Առարկա՝

Դասվար

Թեմա՝ Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Անահիտ Միրիմանյան

2022

Բովանդակություն

Ներածություն 3

Հետազոտության նպատակները 4

Հետազոտության խնդիրները 4

Գլուխ 1

Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդներն ու հնարները 5

Պատմություն 6

Բացատրություն 10

Զրույց 11

Հարցազրույց 13

Դասախոսություն 13

Բանավեճ 14

Աշխատանք դասագրքերով 14

Ընական մեթոդներ 15

Գործնական մեթոդներ 15

Լաբորատոր մեթոդներ 16

Գլուխ 2

Համագործակցային ուսուցում 16

, Մտքերի տարափ կամ մտագրոհ 16

. Վենի դիագրամ 17

. ԳՈՒՍ աղյուսակ 18

. Կանխատեսումներ զույգերով 19

. Քառաբաժան 19

. Հնգյակ 20

. Հեղինակի աթոռ 21

. Կենսագրական բանաստեղծություն 21

Եզրակացություն 22

Օգտագործված գրականություն 24

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Եթե այսօր իմ աշակերտներին սովորեցնեմ ինչպես որ երեկ եմ սովորեցրել , ապա ես նրանցից կգողանամ իրենց վաղվա օրը:

Ժամանակակից դպրոցը բաց միջավայր է:Այդ միջավայրում արդյունավետ կրթություն իրականացնելը պայմանավորված է բազմաթիվ նորամուծություններով՝ հետաքրքիր և բազմաբովանդակ մեթոդներով , հնարներով և խաղերով:

Ժամանակակից դպրոցի տեղեկատվության բազմազանությունը դասը դարձնում է ծանրաբեռնված կրտսեր դպրոցականների համար: Այդ ծանրաբեռնվածությունը ստիպում է մտածել , թե ինչպես նպաստել ուսումնասիրող նյութի նկատմամբ հետաքրքրության առաջացմանն ու ողջ դասի ընթացքում նրանց ակտիվ գործունեության ապահովմանը :

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապատելն է:Շատ կարևոր է ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը: Ժամանակակից մեթոդները օգնում են ակտիվացնել երեխաներին, ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնք նպաստում են երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն առարկաների , մասնավորապես թեմաների նկատմամբ: Մանկավարժության նպատակը բազմապիսի մեթոդների կիրառումն է , որոնք ուսուցման գործընթացը վերածում են սոցիալական շփման , բարձրացնում են ուսման առաջադիմությունը: Ներկայումս ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին դարձնել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից: Մեթոդների կիրառման ժամանակ երեխաները հաճույքով են հաղթահարում ծագած դժվարությունները ուսուցանող նյութի բերաբերյալ, փորձում են իրենց ուժերը , զարգացնում են ընդունակությունները ու տարաբնույթ ունակությունները:Մեթոդների կիրառման դեպքում դասերը դասերը դառնում են հագեցած բազմապիսի խնարներով , խաղերով: Ուսումնական նյութի յուրացումը դառնում է հետաքրքիր , գործունեությունը ՝ գրավիչ , ստեղծվում է աշխատանքային տրամադրություն, թեթևացնում է գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման գործընթացը:

Ժամանակակից մեթոդների կիրառումը հիմք է հանդիսանում ուսուցման գործընթացում աշակերտների՝ որպես գործընկերների սոցիալական շփման , համագործակցության:
Կիրառելով արդյունավետ մեթոդներ՝ ապահովում ենք սովորողների բազմակողմանի զարգացումը:

Հետազոտության նպատակները

- Զարգացնել ուսուցման գործընթացում արդյունավետ մեթոդների մասին գիտելիքները:
- Զարգացնել մեթոդներով դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտություններ:
- Խորացնել մեթոդների արդյունավետ օգտագործման ձևեր դասավանդման ընթացքում:
- Ձևավորել ուսուցման գործընթացում մեթոդների կիրառման հմտություններ:
- Նպաստել ուսուցման որակի բարձրացմանը :

Հետազոտության խնդիրները

* Սահմանել ուսուցման մեթոդների կիրառման առանձնահատկությունները ուսումնական գործընթացում:

* Ուսումնասիրել աշակերտների , ուսուցիչների փոխհարաբերությունները մեթոդները կիրառելիս:

* Մշակել ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ միջոցներ դասեր իրականացնելիս:

* Վերլուծել արդյունավետ մեթոդներ և արդիականացնել:

* Ներկայացնել արդյունավետ մեթոդներով դասեր:

* Գնահատել երեխայի հետաքրքրությունների շրջանակը , ինչպես նաև՝ ուսուցչի մանկավարժական վարպետությունը, ստեղծագործական մոտեցումները ուսուցման մեթոդների կիրառման ժամանակ:

Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդները և մոդելները

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների համակարգ է, նպաստում է գործունեության նպատակների և խնդիրների իրականացմանը:Այն տալիս է գիտելիքների ուսուցման պրոցեսի կազմակերպման ձևերի ու եղանակների հնարավորություն: Մարդկությանը միշտ էլ հուզել են կրթության ու դաստիարակության խնդիրները:Ժամանակի հետ փոխվել են նաև բնագավառի պահանջները, աշխատանքային մեթոդները , և անխուսափելի են դարձել բարեփոխումները:Դարերի ընթացքում գործադրվել են ուսուցման բազմաթիվ մեթոդներ:Դպրոցում գործադրվող մեթոդները ուսուցչին հնարավորություն են տալիս ավելի ճիշտ պլանավորելու և անցկացնելու դասերը:

Ուսուցման գործընթացում մեթոդների կիրառումը պետք է ավելորդ ծանրաբեռնվածություն չառաջացնի սովորողների համար, դասավանդումը լինում է հետաքրքիր և դյուրըմբռնելի, նպաստի երեխաների գործուն մասնակցությանը, մտքերի ազատ ու անկաշկանդ արտահայտմանը, նոր ստացած գիտելիքները սեփական բառերով շարադրելու ձգտմանը: Մեթոդները խթանում են երեխաների մտածողության ինքնուրույնության զարգացումը:Այդ դեպքում դասապրոցեսն արդյունավետ է և տեսանելի:Աշխատանքը հետաքրքիր է և ինձ , և աշակերտների համար: Երեխաները լսում են դիմացինի խոսքը և հասկանում են: Անհրաժեշտ է աշխատանքը ներկայացնել պարզ, մատչելի և գրավիչ ձևերով: Արդյունավետ ուսուցում իրականացնելու համար հարկավոր է գործածել բազմազան մեթոդներ:

Ժամանակակից մանկավարժության մոտեցումների համաձայն՝ մեթոդի ընտրության վրա ազդող գործոնները բազմաթիվ են: Դա կախված է , մասնավորապես , սովորողների տարիքից, կրթական նպատակներից, նյութի բովանդակությունից, առկա ռեսուրսներից և այլն: Ուսուցման մեթոդները հնարավորություն են ընձեռում աշխատանքս երեխայի համար ցանկալի , հաճելի , իսկ ինձ համար՝ արդյունավետ ու ոգեշունչ դարձնել: Այդ դեպքում դասապրոցեսում ընդգրկվում են բոլոր երեխաները :Չկան ուժեղներ և թույլեր. յուրաքանչյուրն զգում է իր կարևոր դերը, աշխատանքի մասնակցության կարևորությունը:

Մանկավարժության մեջ տարածված կարծիքի համաձայն ուսուցումը պետք է ունենա ստեղծագործական ուղղվածություն, որն ընկած է այն մեթոդների և միջոցների հիմքում, որոնց կիրառմամբ իրականացվում են ուսումնական գործընթացի բոլոր գործառույթները:Այս դեպքում ուսուցման ժամանակ սովորողները գիտելիք են ձեռք բերում և ուսուցչի միջոցով , և ընկերների միջոցով , և ինքնուրույնաբար:

Իմ աշխատանքում կարևորում եմ կարգապահությունը: Երեխաները սերտորեն կապված են միմյանց հետ , նրանք սիրով են հաճախում դպրոց: Բոլորս մշակել ենք դասարանի կանոնները.

- Լինենք կարգապահ
- Լինենք ուշադիր
- Չուշանանք դասերից
- Լսենք միմյանց
- Հարգենք միմյանց
- Լսենք յուրաքանչյուրի կարծիքը
- Առաջնորդվենք սովորել – սովորեցնել սկզբմունքով

Յուրաքանչյուրն աշխատում է պահպանել մշակված կանոնները: Հետևելով կանոններին՝ ցանկացած դասապրոցես անցկացնում ենք հետաքրքիր: Կիրառված ցանկացած մեթոդ ծառայում է նպատակին: Այս դեպքում մեթոդները հնարավորություն են տալիս հասկանալով մասնակցել դասին:Համոզված եմ , որ բազմապիսի մեթոդների օգտագործումը արդիական կլինի նաև հետագա դարերի ընթացքում :Յուրաքանչյուր ուսուցիչ , եթե ցանկանում է ուսուցման պրոցեսը դարձնել ավելի հետաքրքիր , մատչելի , բազմակողմանի, ակտիվ և այլն, պետք է օգտագործի տարբեր մեթոդներ , հնարներ, խաղեր:

Ուսուցման մեթոդները պայմանականորեն ներկայացվում է երկու խմբով ՝ ավանդական և նոր կամ ժամանակակից: Մեթոդները բաղկացած են հնարներից և վարժություններից: Բազմաթիվ հնարներից և վարժություններից են բաղկացած մեթոդները:

Այժմ դիտարկենք մի քանի մեթոդներ , որոնք տարբեր դասակարգումների մեջ առավել շրջանառվող են:

Պատմություն

Այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում , փաստական տեղեկությունների հաղորդման համար: Պահանջում է շարադրանքի պատկերավորությու�, հաջորդականություն: Մեթոդը կիրառվում է ուսումնառության առաջին օրերից , արդյունավետ է կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս : Կրտսեր դպրոցականների տարիքային խմբին հատորկ է պատկերավոր մտածողությունը , որի բուռն զարգացմանը կարող է նպաստել այս մեթոդի կիրառությունը: Մեթոդի առանձնահատկությունը այն է , որ ակտիվացնում է աշակերտների երևակայոևթյունը , մտածողությունը, հիշողությունը , հուղական ապրումները: Պատմությունը օգնում է հասկանալու , յուրացնելու արտահայտված բարքի կարոնների և բարոյակլան գնահատականների իմաստը: Առանձնացվում են պատմություն – մուտք , ընդարձակ պատմություն և պատմություն եզրափակում կամ ամփոփում:

Առաջին դասարանում <<Այբբենարան>> -ի ուսուցումն սկսվում է պատմությունից: Աշակերտների խոսքի զարգացման , ազատ և անկաշկանդ արտահայտվելու կարողությունների մշակնամ համար կան բազմաթիվ միջոցներ: Առաջին հերթին նկատի ենք ունենում ընձեռած հնարավորությունները: Ներկայացված թեմատիկ նկարները , նկար – պատմությունները , բառի վանկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման պատմելու և կարդալու կարողության ձևավորման հիմքն են: Այս բաժինը կառուցված է այնպես , որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրությունն, սեր գրքի , դպրոցի նկատմամբ , սովորելու ցանկություն: Երեխաներն աստիճանաբար ներգրավվում են ուսումնառության մեջ, աննկատ ձևով զարգանում է նրանց մտածողությունը , բացահայտվում են ստեղծագործական ունակությունները , պատմելու կարողությունը: Շատ կարևոր է , որ երեխան հեռու մնա սերտողականությունից: Նկատի ունենալով , որ կրտսեր դպրոցականների մտածողությունը կոնկրետ է , պատմությունը պետք է ստեղծել զննական հիմքի վրա : Սակայն հարկավոր է նկատի ունենալ նաև , որ աստիճանաբար պետք է զարգացնել նաև նրանց վերացական մտածողությունը սկսվում է պատմություն գաղափարից:Երբ աշակերտները վարժ կլարող են պատմել , նրանց բառապաշար է ներմուծվում պատմություն տերմինը , որպես խոսքի

ամենափոքր միավոր : Հաջորդ փուլում աշխատանքներ են տարվում պատմության մասերի՝ նախադասությունների բացահայտման ուղղությամբ: Ուսուցիչը պատմում է մի փոքրիկ պատմություն՝ երեխաներին առաջարկելով հաշվել շնչառական դադարները , որոնք էլ պատմության մասեր են դառնում: Այսպես գաղափար է տրվում պատմության հաջորդ միավորի՝ նախադասության մասին:Երեխան սկսում է պատմել՝ տեսնելով նկարի առանձին մասերը: Իմ կողմից փորձված հնար է , երբ նկարը բաժանում եմ առանձին մասերի: Բաժանելով փոքրիկ նկարները աշակերտներին՝ վերջիններս հնչեցնում են իրենց բաժին հասած նկար – նախադասությունները: Հետո այդ նկար- նախադասությունները փակցնում ենք մեծադիր պաստառի վրա կազմում ենք ընդհանուր նկարը :Այնուհետև նշվում է , որ դա պատմություն է: Շատ կարևոր է առաջնորդվել պատմություն –մուտք, պատմություն, պատմություն- եզրափակում շղթայի հաջորդականությամբ: Երխաները դեռևս չիմանալով գրել , կարդալ՝ սովորում են պատմել : Այսպիսով զարգանում է խոսքը, պատմելու կարողությունը: Մայրենիի ուսուցման կարևորագույն խնդիրներից է երեխաներին պատմել սովորեցնելը: Այս փուլում այն դիտվում է որպես ուսուցման նպատակ: Որոնք են պատմել սովորեցնելու խնդիրները: Դրանք են՝

- Պատմելու նախապատրաստում կամ ուսուցում
- Բովանդակության վերարտադրում կամ պատմում

Պատմելու նախապատրաստումը սկսվում է ընթերցված նոր նյութի մասերի բաժանելուց:

Պլան կազմելու համար առաջինը նյութը մասերի է բաժանվում , երկրորդը՝ պլան է կազմվում: Պլանը կազմվում է 2 ձևով.

- Նկարելով կամ նկարներով
- Բառային կամ խոսքային

Նկարելով պլան կազմելու ժամանակ աշակերտներին հանձնարարում եմ նկարել ըստ պատմվածքի մասերի : Հետո հանձնարարում եմ երեխաներին նկարները դասավորել ըստ պամության դեպքերի հաջորդականության: Յորաքանչյուր նկար վերնագրելով՝

դարձնում ենք պլանի կետ: Երբեմն նկարներով պատմելիս օգտագործում եմ պատրաստի նկարները . օրինակ՝ Հովհաննես Թումանյանի <<Ծիտը>> հեքիաթը պատմելու ժամանակ օգտվում ենք Վ. Սարգսյանի <<Այբբենարան>> -ում ներկայացված նկարներից, որտեղ ակնառու տրված է այդ հեքիաթի նկար-պատմությունների հերթականությունը:
Բառային կամ խոսքային պլանի կազմումը ևս կատարվում է պատմվածքը մասերի բաժանելով և առանձին մասերը վերնագրելով կամ առանձին մասերի վերաբերյալ հարցեր տալով: Դրա համապատասխան էլ կարող է կազմվել պլան հետևյալ ձևերով.

- Հարցական նախադասություններով
- Պատմողական նախադասություններով
- Անդեմ նախադասություններով
- Վերնագրերով

Ինչպես նշեցի վերևում ,առաջին դասարանում օգտագործվում է նկարներով պլանը, երկրորդ դասարանում օգտագործվում է նկարելով պլանը՝ աստիճանաբար կազմելով բառային պլան:Պլանը կազմում են նախ հարցական , ապա պատմողական նախադասություններով, երրորդ , չորրորդ դասարաններում կիրառելի է վերնագրերով պլանը:
Պլանը լինում է երկու տեսակի.

- Համառոտ
- Ընդարձակ

Չորրորդ դասարանում << Մայրենի>> -ի << Օջախի հիմքը>> պատմվածքի ուսուցման ժամանակ սովորում ենք պատմել՝ կազմելով պլան: Պլան կազմելիս պատմվածքը բաժանում ենք երկու մասի և վերնագրում ենք այդ մասերը .

- Տանտիրուհին և ծերունիները
- Ընտանիքի անդամների որոշումները

Այնուհետև մասերի ենք բաժանում յուրաքանչյուր մաս

- Տանտիրուհին և ծերունիները
  Հյուրընկալ տանտիրուհին
  Տանտիրուհին և ամուսինը
  Սրբերը
- Ընտանիքի անդամների որոշումները
  Ամուսնու ցանկությունը
  Կնոջ ցանկությունը
  Հարսի ցանկությունը
  Սրբերը

Բովանդակության երկրորդ փուլը բուն պատմելն է , որի տեսակներն են `

- Մանրամասն (ավելի հեշտ է , նախատեսված է առաջին դասարանցիների համար)
- Պատմել համառոտ: Համառոտ պատմելու համար երեխաներին պետք է սովորեցնել ընթերցած յուրաքանչյուր պարբերությունում գտնել գլխավորը:
- Պատմել փոփոխելով (փոխելով դեմքը , ժամանակը , դեպքերի ընթացքը, հերոսների անունները)
- Պատմել ստեղծագործելով (աշակերտներին առաջարկվում է պատմել ստեղծագործելով , ավելացնել դեպքեր, հերոսներ)
- Պատմել ընտրովի
- Պատմել որպես ականատես
- Պատմել որպես մասնակից
- Պատմել շարունակելով

Պատմելու այս տեսակների ընտրությունը կախված է ուսուցչից և նրանից , թե ուսուցիչը ինչպես է երեխաներին սովորեցրել պատմել: Պատմելու այց բոլոր ձրերը կիրառում եմ իմ դասաժամերին: Պատմելուն նախորդող հարցազրույցն ու բառային աշխատանքը պետք է օգնեն երեխաներին պատմել: Պետք է սովորեցնել պատմել սկսել ճիշտ նախադասությունով: Որպես կանոն կրտսեր դպրոցականների համար դժվարը սկիզբն է : Դրա համար պետք է երեխաներին վարժեցնել ճիշտ սկիզբ ընտրելուն:Պետք է նկատի ունենալ , որ լավ սկիզբը շատ կարևոր է պատմելու գործում: Պատմելիս պետք է ուշադիր լսել աշակերտին , անկարկի չընդհատել, մղել

ազատ խոսելու և ամենակարևորը ՝ խոսել գեղեցիկ բառերով, արտահայտել կապակցված միտք :Եթե պետք է , սովորեցնել նաև պատմությունը ավարտել ամփոփիչ որևէ նախադասությամբ: Սովորաբար ուսուցիչը ինքը չպետք է առաջինը պատմի, պետք է թողնի , որ երեխաները պատմեն:Բայց դա չի նշանակում, որ ուսուցիչը դասարանում չպետք է պատմի:

Ամփոփում: Յուրաքանչյուր նյութի ուսուցումը պետք է ավարտվի ամփոփումով:Հիմնականում պետք է կանգ առնել հետևյալ հարցերի վրա ՝

- Նյութի ուսումնասիրությունից ստացած գիտելիքի ճանաչողական նոր տեղեկություններ
- Հյութից եզրահանգվող դաստիարակչական – բացատրական հետևություններ
- Նյութի լեզուն՝ բառերը, արտայտությունները, դարջվածքները, ոճը

Դասանյութի ամփոփումը հիմնականում կատարվում է հարցազրույցով:Այս ժամանակ ուսուցիչը պարզում է , թե ինչպես ընկալվեց դասանյութը երեխայի կողմից:Մեկ անգամ ևս ընդհանրացվում է դասի գաղափարը , կատարվում է դրանից բխող ընդհանրացումներ, դրանից բխող գիտական – դաստիարակչական ու գեղագիտական եզրակացություններ:

Փորձը ցույց է տվել , որ հատկապես կրտսեր տարիքի երեխաներին շատ է հետաքրքրում նկար- պատմությունները, որոնց շնորհիվ հեշտորեն են յուրացնում ուսուցվող նյութը: <<Մայրենի>> առարկայի դասագրքում բոլոր թեմատիկ խմբերը սկսվում են նկարներով: Յուրաքանչյուր մուտքի դասը ներկայացվում է համապատասխան նկարով: Այդ նկարները ամփոփում են ամբողջ բաժինը: Վերարտադրելով նկարների բովանդակությունները՝ աշակերտները կանխագուշակում են թեմատիկ խմբերի բովանդակությունները: Նրանք պատմելով ծանոթանում են նոր թեմային: Հետևաբար զարգանում է նրանց ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը , նրանց մեջ ձևավորվում է կենտրոնանալու ունակություն:Պատմելու կարողությանը նպաստում են դասանյութերին կից նկարները: Տարրական դասարանների բոլոր դասագրքերը հագեցած են բազմապիսի գեղեցիկ , գունազարդ նկարներ, որոնք օգնում են նյութի կարդալու ,պատմելու , ամրապնդելու գործընթացներում:Երբեմն դասանյութերը պատմում են՝ օգտվելով նկարներից: Պատմելուն օգնում են նաև տարբեր խաղերը և հնարները . օրինակ՝ <<Խառնված նախադասություններ>> խաղը օգնում է ճիշտ

դասավորել պատմության հիմք հանդիսացող նախադասությունները և դրանցով պատմել: << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի թեմաները հասկանալու և պատմելու համար շատ են օգնում նյութերին համապատասխան նկարները:Պամությունը կիրառվում է ուսուցման այլ մեթոդների համադրությամբ, ցուցադրությամբ , քննարկումներով, զրույցով:Եթե պատմության միջոցով չի հաջողվում ապահովել նյութի ըմբռնումը , ապա կիրառվում է բացատրության մեթոդը:

Բացատրություն

Սա ուսումնասիրվող առարկայի առանձին հասկացությունների օրինաչափությունների և առանձնակատկությունների բացատրությունն է , որին բնորոշ է շարդրանքի ապացուցողական բնույթը : Այն հիմնված է տրամաբանորեն իրար հետ կապված մտահանգումների վրա : Վերջիններս բացահայտում են տվյալ երևույթի իրական կողմերը: Բացատրության մեթոդից հաճախ օգտվում են տարբեր գիտություններից տեսական նյութ ուսումնասիրելու ժամանակ: Այս մեթոդին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ հիմնահարցի ճշգրիտ և հստակ ձևակերպում, պատչառահետևանքային կապերի հաջորդական բացահայտում և ապացուցում, համեմատությանն, համանմանության , բաղդատության կիրառում : Շատ դեպքերում բացատրությունը համատեղվում է դիտումներին , սովորողների և ուսուցչի կողմից ձևակերպված հարցադրումներին : Այդ դեպքում այն կարող է վերածվել զրույցի:

Զրույց

Զրույցը երկխոսության բնույթ ունեցող ուսուցման մեթոդ է, որի ընթացքում ուսուցիչը որոշակի հարցադրումների միջոցով աշակերտներին հասցնում է նոր նյութի ընկալմանը , ստուգում է նաև ուսուցանված թեմայի յուրացումը: Տարբերվում են հետևյալ տեսակի զրույցները՝

- Անհատական զրույցներ
- Խմբային զրույցներ
- Ֆրոնտալ

Անհատական զրույցների դեպքում հարցերը հասցեագրվում են մեկ աշակերտի:

Այս դեպքում դասի ընթացքում կարող է թեմայի շուրջ անցկացնել թե աշակերտ – աշակերտ , թե ուսուցիչ- աշակերտ տարբերակներով: <<Այ քեզ բան , ինչ կա – չկա, ինչ երևում , չի երևում ՝ հայ – րե – նիք է>> բաժինը կարելի է սկսել զրույցով: Աշակերտն ինքն է զրույցի ընթացքում ներկայացնում իր հայրենիքը : Հարրենիքը ներկայացնելիս բոլոր հարցերը ուղղվում են մեկ աշակերտի: Մյուսները զրույցի ընթացքում հետևում են արտահայտած մտքերի ճշմարտությանը:

Խմբային զրույցների դեպքում հարցերը հասցեագրվում են որևէ խմբի: Խմբի յուրաքանչյուր անդամ փորձում է տալ հարցերին ճիշտ պատասխաններ՝ լսելով և ընդունելով ընկերների կարծիքները: Այս դպքում զրույցը կարելի անցկացնել խումբ – խումբ, աշակերտ – խումբ տարբերակներով: <<Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքներ>> թեմայի ամփոփման ժամանակ դասարանը բաժանվեց երեք խմբի՝ << Երաժշտություն>> ,<< Նկարչություն>>, <<Գրականություն>> անվանումներով: ներկայացվեց հարց խմբերին.

Արվեստի ո՞ր բնագավառն է տարածված Հայաստանում:

Խմբերի միջև ծավալվեց հետաքրքիր զրույց : Զրույցի ընթացքու յուրաքանչյուր խումբ ներկայացնում էր իրեն բաժին հասած արվեստի ճյուղը ՝ բերելով հայտնի հրաշալիքների օրինակներ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել աշակերտների կարգապահությանը՝ հիշեցնելով մեր կողմից սահմանված կարգապահական կանոնները , որոնք նշված են վերևում:

Ֆրոնտալ զրույցների դեպքում հարցերը հասցեագրվում են բոլորին: Զրույցի մասնակիցները բոլորն են : Ֆրոնտալ զրույցը կիրառվում է դասի տարբեր փուլերում (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում և անդրադարձ):

Զրույցը իր անցկացման ժամանակ իմաստով լինում է երեք տեսակի.

- Նախապատրաստական զրույց
- Ուղեկցող զրուց
- Ամփոփիչ զրույց

Մուտքի զրույցները կիրառվում են նյութի ուսուցումը սկսելուց առաջ: Բնագրի ուսոցման ժամանակ նախապատրաստական զրույցը նախորդում է բնագրի ընթերցմանը և երեխաներին հոգեբանորեն նախապատրաստում է բնագրի

ընկալմանը, ստեղծագործության կերպարների ճանաչմանը, ստեղծում է համապատասխան տրամադրություն, ծանոթացնում է երեխաներին ստեղծագործության հերոսներին: Նախապատրաստական զրույցը պետք է կազմվի կարճ , գեղեցիկ և համոզիչ: Այն պետք է տրամադրի երեխաներին նոր նյութի ընդգրկման և առաջացնի հետաքրքրություն: Նախապատրաստանակ զրույցի բովանդակությունը իր մեջ չպետք է ներառի ընթերցվող նյութից տարրեր:

<< Քիչ ենք , բայց հայ ենք>> բանաստեղծության ուսուցումից առաջ դասանյութի բովանդակության ընկալմանը նախապատրաստելու նպատակով դասը սկսեցի <<Ով ենք մենք>> ֆրոնտալ զրույցով:Աշակերտները զրուցեցին հայ ժողովրի ծագման պատմությունից , գրերի գյուտից, մեր անցած պատմությունից և այսօրվանից: Զրույցի վերջում ավելացրի , որ հայրենիքը մենք ենք , մեր նախնիները և այն մարդիկ , ովքեր ապրում են հայրենիքում, մեր ծնողները , մեր տունը : Մենք հպարտ ենք մեր հայրենիքով: Այնուհետք ավելացրի, որ պետք է կարդան մի բանաստեղծություն , որը գրել է Պարույր Սևակը:Այսպիսի զրույցով ակտիվացնում են նախկինում ձեռք բերած գիտելիքները ստուգվում են նոր նյութի հաղորդման համար սովորողների պատրաստվածության աստիճանը , նոր նյութի ճանաչողական գործունեության մեջ ընդգրկվելու մակարդակը:

Ողեկցվող զրույցը անսկացվում է ընթերցվող բնագրին զուգահեռ: Ուսուցիչը կամ աշակերտը ընթերցում են ՝ ժամանակ առ ժամանակ ընդհատելով այն բացատրություն տալով , աշակերտներին ներգրավելով ընթերցվող նյութի վրա կատարվող տրամաբանական աշխատանքներին:Եթե նախապատրաստական զրույցի բովանդակությունը ընթերցվող բնագրի ընգհանուր թեման է , ապա ուղեկցվող զրույցի նյութը հենց ընթերցվող ստեղծագործության բուն նյութն է:

<< Քիչ ենք , բայց հայ ենք>> բանաստեղծության ուսուցման ժամանակ կարելի է անցկացնել զրույց ՝ ընթերցելուց հետո: Զրույցի ընթացքում աշակերտները քննարկում են բանաստեղծության բովանդակությունը՝պատասխանելով հետևյալ հարցերին՝

- Ըստ բանաստեղծության ո՞ր հատկանիշներն են բնորոշ հայ ժողովիդին

- Թվարկել հպարտություն առաջացնող խորհրդանիշները և պատմել , թե ինչ գիտեն դրանց մասին

Ամփոփիչ զրույցը անցկացվում է , երբ ավարտվել է բնագրի ընթերցանությունը , քննարկումը , կատարվել է բառային աշխատանք, բացահայտված են հերոսները , վեր է հանված գաղափարը: Այստեղ կրիկն կազմակերպվում է հարց ու պատասխան:

<< Օջախի հիմքը>> բնագիրն ուսումնասիրելիս ամփոփման ժամանակ անցկացրեցինք զրույց հետևյալ հարցերի առաջադրմամբ.

- Ի՞նչ սովորեցի...
- Ի՞նչ հասկացա...
- Ի՞նչ մտածեցի...

Զրույցները ըստ իրենց կազմակերպման եղանակների լինում են նաև՝

- Ակտիվ երկկողմանի զրույց
- Բացատրական կամ մեկնական զրույց
- Դիդակտիկական զրույց
- Էվրիստիկ զրույց
- Հարցազրույց

Հարցազրույց

Հարցազրույցը կարող է անցկացվել մեկ մարդու կամ խմբի կողմից: Զրույցն անցկացնելիս կարևոր են հարցադրումների ճիշտ ձևակերպումները:Դրանք պիտի լինեն կարճ , հստակ , բովանդակալից, տրամաբանորեն կապված լինեն միմյանց հետ, բացահայտեն ուսուցանվող նյութի ամբողջականությունը և էությունը: Կարևոր

է , որ հարցերը բովանդակությամբ և ձևով համապատասխանեն սովորողների զարգացման աստիճանին: Հարկ չկա ձևակերպելու երկակի կամ հուշող՝ պատրաստի պատասխան պարունակող , կամ էլ միանշանակ <<այո>> կամ <<ոչ>> պատասխան ակնկալող հարցեր:

Այս ամենի կողքին զրույցի մեթոդն ունի նաև թերություններ. պահանջում է երկարատև ժամանակահատված , եթե սովորողները չունեն որոշակի պատկերացումների և հասկացությունների պաշար , ապա զրույցը արդյունավետ չի կարող լինել: Զրույց կարող է պարունակել սխալ միտք , որը հնարավոր է մյուսների հիշողության մեջ ամրակայել որպես ճշմարիտ գիտելիք:

Դասախոսություն

Այս մեթոդն ունի կայուն կառուցվածք՝ հաղորդվող նյութի ծավալայնություն, նյութի մատուցման տրամաբանություն, գիտելիքների համակարգված բնույթ:Տարբերվում են գիտական- հասարակական և ակադեմիական դասախոսություններ: Դասախոսությունները նվիրվում են ուսումնական ծրագրի առավել խոշոր և կարևոր բաժիններին:Դասախոսությունը այսօր արդիական բնույթ ունի:

Բանավեճ

Բանավեճը հենվում է որոշակի հիմնահարցի շուրջ կարծիքների և տեսակների փոխանակման վրա: Ուսումնական բանավեճի գլխավոր գործառույթը ճանաչողական հետաքրքրության խթանումն է: Բանավեճի շնորհիվ մասնակիցները ձեռք են բերում նոր գիտլիքներ, ամրապնդվում է սեփական կարծիքի ճշմարտացիության զգացումը , սովորում են պաշտպանել սեփական տեսակետը, հաշվի նստել այլոց հետ, հաղուրժել և ընդունել նրանց արտահայտած տեսակետները և կարծիքները: Այս մեթոդը կարելի է կիրառել այն դեպքում , երբ մասնակիցները ունեն թեմայի շուրջ համապատասխան գիտելիքներ, դրսևորում են

ինքնուրույն մտածողության կարողություն, կարողանում են հիմնավորել սեփական տեսակետը թեմայի շուրջ:Առանց գիտելիքի բանավեչը կդառնա անիմաստ:<<Օջախի հիմքը>> բնագիր ուսուցման ժամանակ կարելի է անցկացնել բանավեճ : Աշակերտներ կբաժանվեն երեք խմբի՝<< Սեր>> ,<< Հաջողություն>> ,
<< Հարստություն>> : Այս դեպքում կբանավիճեն ՝ << Ո՞րն է ընտանիքում կարևորը>> հարցի շուրջ: Յուրաքանչյուր խումբ կկարևորի իր տարբերակը: Խմբերը կլսեն , կկարևորեն սերը, որի անպակաս կլինեն հաջողությունն ու հարստությունը:

Աշխատանք դասագրքերով

Սա ուսուցման կարևոր մեթոդներից մեկն է: Այս մեթոդի գլխավոր առավելությունն այն է , որ սովորողը ցանկացած ժամանակ իրեն հատուկ տեմպով նորից ու նորից կարող է կարդալ ուսումնական նյութը: Ծրագրավորված դասագրքեր կիրառելու դեպքում . որոնցում , բացի ուսումնական նյութից տեղ են գտնում կառավարող տեղեկություններ, արդյունավետորեն կլուծվեն գիտելիքների և կարողությունների ստուգման , շտկման և ախտորոշման հարցերը: Գրքով աշխատանքը կարող է կազմակերպվել ինչպես ուսուցչի անմիջական ղեկավարությամբ , այնպես էլ որպես սովորողի ինքնուրույն աշխատանք տեքստի շուրջ: Այս մեթոդի շնորհիվ սովորողները կարող են թե յուրացնել ուսումնական նյութը : Ինչպես նաև կարող են կուտակել տեքստային աշխատանքի փորձ, սովորում են աշխատել տարբեր բնույթի տպագիր աղբյուրներով:Օրինակ՝ << Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները>> թեման ամփոփելիս աշակերտները պատրաստեցին զեկուցումներ՝ նախընտրած հրաշալիքի մասին թեմայով ՝ օգտվելով համապատասխան աղբյուրներից
(գրքեր, հանրագիտարաններ, տեղեկատվական այլ աղբյուրներ), կամ
<< Ես և շրջակա աշխարհը 4 >> առարկայի << Երկիրը մեր տունն է>> թեման ամփոփելիս աշակերտները կրկին ներկայացրեցին զեկուցումներ թեմայի վերաբերյալ ՝ կրկին օգտվելով տեղեկատվական աղբյուրներից(դասագրքեր, գրքեր):

Զննական մեթոդներ

Զննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագաներից և

ուսուցման տեխնիկական միջոցներից: Զննականությունը հնարավորություն է ընձեռում առարկաներին ծանոթանալ բնական վիճակում կամ սիմվոլների միջոցով:
<< Իլյուստրացիա>>
Մեթոդի կիրառման ժամանակ ուսումնական նյութը հաղորդելիս պատմելը , զրուցելը, բացատրությունը , դասախոսությունը զուգակցում են ինյուստրացիային , այսինքն՝ ցուցադրմանը: << Ես և շրջակա աշխարհը>> առարկայի << Մայրցամաքներ և օվկիանոսներ>> թեմայի ուսուցման հիմքում ընկած են դիտազննական պարագաները ՝ քարտեզներ , պաստառներ , նկարներ:
<< Դեմոնստրացիա>>
և ուսուցումը, և ամփոփումը կատարում եմ՝ կիրառելով այս մեթոը. ցուցադրում եմ ֆիլմեր: Այս դեպքում ցուցադրմանն ուղեկցում ՝ շարժումը: Ահա սա է տարբերությունը ինլուստրացիայի և դեմոստրացիայի միջև: Այնուամենայնիվ իմաստը մնում է նույնը ՝ ցուցադրումը:Մեթոդի էությունը կիկին ցուցադրումն է: Օրինակ՝ << Երկիրը մեր ընդհանուր տունն է>> թեմայի
Ուսուցումը արդյունավետ կլինի, եթե կիրառվեն զննական մեթոդները:

Գործնական մեթոդներ

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընթարացնող բնույթ:Այս դեպքում սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք: Սրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից:<< Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման ժամանակ կատարվող գործնական աշխատանքները նյութը դարձնում են տեսանելի և հասկանալի:

Լաբորատոր մեթոդներ

Այս մեթոդները դասվում են գործնական մեթոդների շարքին և վերաբերում են առանձին դասընթացների, օրինակ ՝ տարրական դասարաններում << Ես և շրջակա աշխարհը>>:Լաբորատոր մեթոդների կիրառոման ժամանակ կատարվում փորձեր: Գործողությունները կրում են գործնական բնույթ:
. Մթերքի մեջ օսլայի պարունակության մասին իմանալու համար կատարեցի փորձ. յոդի լուծույթից մի կաթիլ կաթեցրեցի հացի և կարտոֆիլի վրա: Երեխաները տեսան

, յոդը հացի և կարտոֆիլի վրա դարձավ կապտամանուշակագույն: Այդպես պարզեցինք , որ նշված մթերքները օսլա են պարունակում:

. Աղը լցրեցինք բաժակով լցված ջրի մեջ և գդալով խառնեցինք : Տեսանք , որ խառնելու ընթացքում այն աստիճանաբար դարձավ անտեսահելի: Դրանից հետո փորձեցինք ջրի համը և զգացինք , որ այն աղի է: Աղը չի անհետացել , այն մնացել է բաժակում: Այն բաժանվել է մանրագույն մասնիկների, այսինքն՝ լուծվելով խառնվել է ջրի մասնիկների հետ: Հետևաբար՝ նյութերը և դրանցից կազմված մարմինները կազմված են մանրագույն մասնիկներից:

Համագործակցային ուսուցում

Համագործակցությունը թույլ է տալիս սովորողներին ակտիվորել մասնակցել ուսուցման գործընթացին: Համագործակցությունը սովորողների և ուսուցանվող նյութի միջև կապ է ստեղծում՝ օգնելով մտածել ավելի անաչառ:Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են:

Ներկայացնեմ դասավանդման ժամանակակից մի քանի օրինակներ, որոնք կիրառում եմ իմ աշխատանքում:

1. Մտքերի տարափ կամ մտագրոհ

Այս մեթոդը խմբային աշխատանքի պարզագույն բայց արդյունավետ մեթոդ է: Խմբի անդամների առջև խնդիրնէ դրվում . նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ թեմայի շուրջ: Բոլոր մտքերը ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:

հայրենիք երկիր մեծ փոքր հին

սկզբնավայր բնօրրան **Հայասան** ծննդավայր տուն

գեղեցիկ նոր ընտանիք հայր մայր

Այս մեթոդը հաճախ եմ կիրառում դասի խթանման փուլում: Այսպես վեր են հանվում աշակերտների ունեցած գիրտալիքները թեմայի շուրջ:Այստեղ շեշտը պետք է դնել արտահայտվող մտքերի քանակի վրա : Պետք է խրախուսել շատ և բազմատեսակ մտքեր արտահայտելը: Սակայն պետք է հետևել , որ մտքեր արտահայտելու հարցում որևէ մեկի գերակայություն չստեղծվի:

2 Վենի դիագրամ

Վենի դիագրամը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները , երևույթները , անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:

Սասունցի Դավիթ Հայկ Նահապետ



Երկու հերոսներին բնութագրելու համար արդյունավետ մեթոդ է: Աշակերտները բնութագրելով հերոսներին գտնում են նմանություններ և տարբերություններ:

Այս մեթոդը կիրառում եմ մաթեմատիկայի<< Պատիկ , բազմապատիկ>> թեման ոոսումնասիրելիս.

2 , 4 , 8, 10, 16 , 20 թվերը խմբավորել այնպես , որ մի խմբում լինի 2-ի , մյուսում՝ 4-ի պատիկ թվեր:



3. ԳՈՒՍ աղյուսակ

ԳՈՒՍ(գիտեմ - ուզում եմ իմանալ- սովորեցի). երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է , որը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը նյութը ուսումնասիրելու ժամանակ:Աղյուսակը գծում եմ կամ մեծ թղթի վրա, կամ գրատախտակին:Աղյուսակի կիրառումը հնարավորություն է տալիս լայնածավալ աշխատանք իրականացնելու՝ անդրադառնալով թեմատիկ խմբի բոլոր տեքստերի բովանդակությանը, հերոսների հիմնական առանձնահատկություններին, բառապաշարին , արժեքներին:Սովորողները ոչ միայն ձեռք են բերում գիտելիքներ, իրենց մեջ զարգացնում են կարողություններ , այլև հասունանում են որպես սովորողներ, զգում են սովորելու իրական հաճույքը:

<<Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքներ>> թեմատիկ խմբի ուսումնասիրության մուտքի դասը անցկացրեցի ԳՈՒՍ աղյուսակով: Աշակերտները առաջին և երկրորդ սյունակներում լրացրեցին այն ,ինչ գիտեն Հայաստանի մասին:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
.Հայաստանը մեր հայրենիքն է: .Հայասանը լեռնային երկիր է: .Հայաստանում կան շատ հրաշալիքներ:	.Ուզում եմ ծանոթանալ Հայաստանի հրաշալիքներին: .Ուզում եմ իմանալ իմ պապերի , նախապապերի մասին:	

Աղյուսակի երրորդ սյունակում գրում են օրվա թեմայից ստացած գիտելիքները:Այս աղյուսակը կարելի է օգտագործել ամբողջ թեմատիկ խումբն ուսումնասիրելիս՝ յուրաքանչյուր անգամ ավելացնելով անցած նոր նյութից ստացած գիտելիքները:Աղյուսակին կարելի է անդրադառնալ թեմատիկ խումբն ամփոփելիս:

4 .Կանխատեսումներ զույգերով

Այս մեթոդը կիրատելիս աշակերտների մեջ առաջանում է հետաքրքրություն ուսուցավող նյութի նկատմամբ:Նոր դասի հաղորդման ժամանակ գրատախտակին գրում եմ դասանյութից ընտրած 4-5 բառ(օջախ, տանտիրուհի, հոգնել, ծերունի, ամուսին):Աշակերտները իրենց զույգերի հետ կանխատեսումներ են անում , թե դասի թեման ինչի մասին կարող է լինել, և այդ բառերն ինչպես կարող են օգտագործված լինել դասում : Տրամադրում եմ 5 րոպե քննարկումների և գրառումների համար:

Օրինակ՝

.Ամուսինը և տանտիկինը ապրում են միասին:

.Նրանց օջախում է ապրում ծերունին:

.Ծերունին հոգնել էր:

Այնուհետև ընթերցում են դասանյութը: Ընթերցելուց հետո քննարկումներ կատարելիս անդրադառնում ենք կատարած կանխատեսումներին՝ արդյոք իրենք ճի՞շտ էին կանխագուշակել , թե՞ ոչ:

.Ամուսինը և տանտիկինը ապրում են միասին:

.Նրանց հյուր էին եկել ծերունիները:

.Ամուսինը հոգնած վերադարձավ տուն:

5. Քառաբաժան

Այս մեթոդը կարելի է կիրառել դասի կշռադատման փուլում: Երկրորդ դասարանի <<Մայրենի>> -ի <<Չնվաճված աշխարհամասը>> բնագիրն ուսումնասիրելիս կիրառել եմ <<Քառաբաժան>>մեթոդը: Մեթոդը արդյունավետ էր, քանի որ աշակերտները հարցերի միջոցով ամփոփեցին դասանյութը.

Ի՞նչ տեսաք, ի՞նչ հասկացաք : **Մենք ուժեղ ենք, թույլ չենք տա թշնամին ոտք դնի մեր հողերի վրա:**	**Ի՞նչ զգացումներ ունեցաք:** **Մեծ ցավ ապրեցինք: Մենք միշտ մեր զինվորի հետ ենք:Դա մի տխուր պատմություն է:**
Գրել տուն բառով հնգյակ: **Տուն** **Ամուր, կանգուն,**	**Ինչպես կվերնագրեիք բնագիրը:** **<< Իմ տունը>>** **<<Մեր հայրենիքը>>**

Պաշտպանող, կանչող, **Ես կպաշտպանեմ իմ տունը:** **Հայրենիք**	**<< Կարոտ>>**

6.Հնգյակ

Հնգյակը բանաստեղծություն է , որի ստեղծման համար անհրաժեշտ է ստացված տեղեկատվությունը , գիտելիքները համադրել ու արտահայտել դիպուկ արտահայտություններով: Այն ունի ուղեցույց. այն է՝

- Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը(գոյական):
- Երկրորդ տողը բաղկացած է երկու բառից(ածականներ, որոնք բնորոշում են հասկացությունը):
- Երրորդ տողը բաղկացած է երեք բառից(արտահայտում են հասկացության գործողություններ):
- Չորրորդ տողը բաղկացած է չորս բառից կազմված արտահայտություններից , որոնք ցույց են տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:
- Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է , որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Հայաստան ,
Հին նոր,
Շենացող, մեծացող,
Իմ հայրենիքը Հայաստանն է:
Բնօրրան:

Հայրիկ,
Ուժեղ, գեղեցիկ,
Սիրող, պաշտպանող,
Նա միշտ իմ կողքին է:
Հարազատ:

7. Հեղինակի աթոռ

Այս մեթոդը շատ կիրառում եմ ՝ սովորողներին հնարավորություն տալով ինքնադրսևորվելու, նրանց մեջ պատասխանատվության զգացումը մեծացնելու, սեփական խոսքը ներկայացնելու կարևորության գիտակցումը: Օրինակ՝ <<Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները >> թեմատիկ խմբի ամփոփման ժամանակ առաջադրեցի հորինել պատմություն՝ <<Խոսում են հրաշալիքները>> (չորրորդ դասարանի<< Մայրենի>> դասագրքից) նկարի շուրջ: Յուրաքանչյուր աշակերտ իր գրած նյութը ներկայացրեց ոչ թե տեղից, այլ կենտրոնում դրված աթոռին նստած:Դա խթան հանդիսացավ սեփական խոսքին հետևելու, խոսքի արժեքը գիտակցելու համար:

8. Կենսագրական բանաստեղծություն

Այս մեթոդը օգտագործում եմ բնագրի հերոսներին բնութագրելիս:

Կենսագրական բանաստեղծություն

Անունը	Հայկ
Ո՞վ է...	Նահապետ
Ինչպիսի՞ն է(նկարագրել արտաքինը)	ուժեղ, հաղթանդամ, լայնաթիկունք
Ինչպիսի՞ն է(բնութագրել ներքինը)	Բարի, հոգատար,մտահոգ
Ի՞նչ է արել...Ինչո՞վ է << հայտնի>>...	Նա կռվել է Բելի հետ: Թորգոն Նահապետի որդին է:

Եզրակացություն

Ուսուցման պրոցես ասելով ամենից առաջ հասկանում ենք գիտելիքների հաղորդում,ձեռքբերում , մարդու համար կենսական նշանակություն ունեցող կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի դրսևորում:Գիտելիքը ձեռք է բերվում որպես շրջապատի ճանաչման միջոց, որպես գիտելիք կամ տեղեկություն մարդկության անցյալի , ներկայի, ապագայի , նշանավոր դեպքերի , դեմքերի , բնության , բուսական ու կենդանական աշխարհի, գիտության տարբեր բնագավառների ու տեխնիկայի մասին:

Տարրական դասարաններում ուսուցման գործընթացում կիրառվում են արդյունավետ մեթոդներ և մոդելներ, որոնք ուսուցվող նյութը դարձնում են մատչելի և դյուրամարս :

Հետազոտական աշխատանքը նպաստում է, ուսումնական գործընթացը հեշտացնելու, ուսումնասիրած մեթոդներով դասեր պլանավորելու և հմտորեն կազմակերպելու գործունեությանը:

Աշխատանքի ընթացքում խորացան և ամրապնդվեցին մեթոդների արդյունավետ օգտագործման նորանոր ձևեր : Ձևավորվեցին կիրառման հմտություններ:

Ուսումնասիրելով մեթոդները՝ կարելի է ասել , որ դրանց ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը , սովորողի մեջ ձևավորում է նոր գաղափարներ , հետաքրքրություններ:

Ուսուցման հիմնական նպատակը բազմապիսի ու բազմակողմանի գիտելիքների հաղորդումն է ու ձեռքբերումը, երեխաների մեջ բոլոր կարգի կարողությունների ձևավորումը: Ժամանակակից մարդուն անհրաժեշտ գիտելիքների ծավալը աճում է խիստ և արագ:Աշակերտների մեջ գործնական կարողությունների մշակման պրոցեսի կազմակերպումը հատուկ արժեք է ստացել: Այս ամենի հիմքում ընկած է ուսումնական գործունեության ճիշտ և նպատակային կազմակերպումը: Ուսումնական գործունեության մեջ կան բազմապիսի մեթոդներ և հնարներ: Այդ մեթոդներն ու հնարները խթանում են ուսուցման արդյունավետությունը: Ուսուցումը ընթանում է աշակերտի կատարած մտածված , հետևողական աշխատանքի շնորհիվ :

Անվանի հոգեբան Ի. Լինհարտը ասել է .<< Ճանաչողության բարձրագույն ձևերը ծագում են ոչ թե անմիջական զգայություններից ու ընկալումներից , այլ գործունեության ընթացքում(սովորելիս), զգայա-շարժողական կառուցվածքի հիման վրա, որով և ավարտվում է մտավոր գործողությունը>>: Ուսումնական գործընթացում առաջարկվող մեթոդները տարբեր են: Դասի յուրաքանչյուր փուլում հնարավոր է օգտագործել բազմապիսի մեթոդներ և հնարներ : Անհրաժեշտ է ճիշտ և տեղին կատարել մեթոդի ընտրությունը:Մեթոդի օգտագործումը պետք է չափավորված և կշռադատված լինի. դրանց անտեղի ու չափից ավելի օգտագործումը օգուտի փոխարեն , ընդհակառակն, մեծ վնաս կարող է հասցնել ուսումնական աշխատանքին:

Առաջարկում եմ՝ ընդլայնել ուսումնական գործընթացում ակտիվ մեթոդների հնարների և խաղերի կիրառումը , ուսումնասիրել և կիրառել նորանոր մեթոդներ, աշխատել ձևավորող գնահատման շեշտադրմամբ , բացահայտել աշակերտի կարողություններն ու հմտությունները , որոնք հիմք կդառնան ուսումնական գործընթացում ,ստեղծել պայմաններ , որոնք կխթանեն ուսուցչի գործունեությունը:

Կրթության հիմնական նպատակը աճող սերնդի նախապատրաստումն է ապագային: Ուսուցումը դառնում է դյուրին ,երբ ընթացքը աշակերտի համար գրավիչ է ու հաճելի: Իսկ դրա համար անհրաժեշտ է , որ մենք կարողանանք, ըստ նախասիրությունների և ընդունակությունների, ճիշտ ընտրել գործունեության ձևը:

Օգտագործված գրականություն և հղումներ

- Ա. Ե. Տեր – Գրիգորյան << Ուսուցման նոր ձևերի անհրաժեշտությունը>> Երևան – 1986 << Լույս>>
- Ա. Ե. Տեր – Գրիգորյան<< Քերականության մեթոդիկա>> Երևան - <<Լույս>> Հրատարակչություն 1977
- Մեթոդներ և հնարներ https://www.facebook.com/noravanschool/photos/a.1383790015208103/2459889937598100/?type=3
- Համագործակցային ուսուցում https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%
- <<Նախաշավիղ>> 1- 2. 2007
- << Նախաշավիղ>> 6. 2009